

Դիմում Մեծն Արարչին

Վեմիր Համբարձումյան

Ո՛վ Դու Ստեղծագործ՝
Արարիչ, Կերտող.
Երկինք ու երկիր.
Աշխարհ ստեղծող:

Որ ստեղծել ես Արև ու Լուսին,
Ծով օվկիանոսներ, առվակներ խրթին,
Հզոր Արևին կենտրոն դարձրել՝
Նրա շուրջ բազում աստղեր ես շարել:

Հուժկու առյուծի կողքին անպայման,
Ստեղծել եղնիկ՝ խղճուկ, անպաշտպան ...
Խորամանկ օձին թույն ես նվիրել,
Իսկ փոքրիկ մեղվին՝ նեկտար պատվիրել:

Մարդկանց բաժանել՝ ազգերի բազում,
Կերտել լեզուներ՝ գույնզգույն, անգույն ...
Դու «բարու» կողքին՝ «չարն» էլ ես ստեղծել,
Ցերեկվա լուսին՝ գիշեր հակադրել:

Քանզի հուժկու ես՝ Գերագույն ուժով,
Քանզի հզոր ես՝ անսահման ներող,
Ինչո՞ւ չես տալիս մեզ վերջին անգամ,
Մի նոր ճիշտ ուղի մի հնարք նորան՝
Որ դու մեզ փրկես կործանման եզրից,
Որ մեզ դուրս հանես պարսից ծուղակից:
Որ էլ չմարի կրակը մեր օջախի,
Որ նորից ծաղկի երկիրը Նայիրի:

Ինչո՞ւ չես ուզում մեր տանը ապրենք,
Ինչո՞ւ չես ուզում մեր օդը շնչենք,
Ինչո՞ւ ես ցրել աշխարհով բազում,
Ինչո՞ւ չես տեսնում՝ թե՞ ոնց ենք մաշվում՝
Թող տուն ու տեղ, հայրենի օջախ,
Որտեղ մեր սիրտն է, մեր հոգին անմար:

Ո՛վ դու Մեծ Կերտող
Ներիր ինձ խնդրեմ,

Գո՞ւցե պատճառը հենց այն միայն՝
Որ մեզ տվել ես պարզև անսահման ...
Նոյան Տապանը մեզ մոտ է իջել:
Մեզ պարզևել ես երկիր Նայիրյան
Ծովից-ծով ընկած մի մեծ Հայաստան...

Բայց մենք հայերս՝
Այդ չենք գնահատել,
Ինչպես որ հարկ է՝
Քեզ չենք ճանաչել:

Դարձել ենք կռապաշտ, հավատ ուրացող,
Գրիգոր Լուսավորչին՝ Խոր Վիրապ նետող,
Դարձել ենք նախանձ՝ իրար հալածող,
Դարձել անհավատ «ես» սիրաբանող:

Ո՛վ դու Մեծ Կերտող, ների՛ր մեզ խնդրեմ՝
Ների՛ր մեր գործած հանցանքի համար,
Ների՛ր մեր սխալ ճամփեքի համար՝
Քանզի որ մարդիկ քեզ չեն հասկացել,
Տված երթուղուդ ճիշտ չեն հետևել,
Չեն էլ մտածել, թե ինչպե՞ս եղավ՝
Որ մարդ արարած լույս աշխարհ եկավ...
Թե ո՞վ ստեղծեց մեր սիրտն ու հոգին՝
Ո՞ւմ ենք պարտական մեր կյանքով անգին:

Քանզի քո տված հոգին չեն տեսնում,
Այն չեն շոշափում, ձայնը չեն լսում ...
Չգիտեն, որ Դու մեր մեջ ես, որ կաս,
Մեր սիրտն ու հոգին՝ Դու ես անկասկած ...

Հոգեկան աշխարհը լրիվ անտեսել՝
Նյութական կյանքի պոչից են բռնել:
Սուրբ խորան գնում, մոմեր են վառում՝
Որի իմաստը չեն էլ հասնակում:
Չեն էլ հասկանում, որ «Աստվածը» դա՝
«Ասա» և «Տված» ամբողջն է, որ կա:
Աստված ես կոչվել, որ միշտ Քեզ դիմենք,
Խոսքերով շիտակ «ԱՍԱ» ի՞նչ անենք,
Եվ Դու մեզ «ՏԱՍ» այն, ինչը որ խնդրենք:

Դիմում են ես Քեզ՝

Ո՛վ Մեծ Արարիչ,
Դիմում եմ ես Քեզ՝
Գերագույն Փրկիչ՝
Ների՛ր մեզ խնդրեմ,
Որ Քեզ չենք պաշտել,
Որպես հզոր կուռք՝
Չենք երկրպագել ...

Աղաչում եմ Քեզ,
Աղերսում կրկին՝
Որ ներես Դու մեզ՝
փրկես մեր ազգին:
Օգնիր մեր ազգին՝
Գեթ վերջին անգամ,
Որ մենք չկորչենք՝
Ազգով հավիտյան:

Աղաչում եմ Քեզ,
Որ պաշտպան լինես՝
Մոլորված ուղուց՝
Եհշտ ճամփի բերես:
Որ տուն հետ դառնա՝
Պանդուխտ հայկական,
Որ հզորանա՝
Երկիրը Նաիրյան:
Որ նորից հնչեն դիմում ու զուռնան,
Ամենուր թնդա երգը հայկական:

Որ նոր Սարյանը՝ Արև ևկարի,
Որ Հովհաննեսը՝ ծովը փոթորկի,
Հնուտ Վիկտորը՝ աստղակույտ գտնի,
Փոքրիկ Արամը՝ սուսերով պարի:

Պարույր Սևակը՝ Եղեռնը ողբա,
Իսկ Թումանյանը՝ Մարոյին կանչի,
Սուրբ Նարեկացին՝ Շարական կարդա,
Մեծ Կոմիտասը՝ Հորովել երգի:

Մեսրոպ Մաշտոցը նոր տառ ստեղծի,
Իսկ մեծն Րաֆֆին «Սամվել» հորինի:
Թախծոտ Տերյանը Լճակին գովի.
Մեծ Սայաթ-Նովան իր սերը երգի:

Ազնիվ Շիրազի՝ երազն իրականանա,
Որ նա Մասիսի գագաթին ելնի:
Շարլ Ազնավուրը՝ «Օ՝ Մարի» կանչի.
Երվանդ Քոչարը՝ Դավթի քանդակի:

Արքայից-Արքան՝ Մեծ Հայք ստեղծի,
Խիզախ Վարդանը՝ Ավարայր շահի,
Հայ ծովակալը նավատորմ վարի,
Տիգրանը՝ շախմատի թագը վաստակի ...

Որ նոր ծիլեր տա՝ Տաղանդն հայկական,
Ամեն հայ շահի պատիվ անսահման ...
Հրատարակվել է «Հայրենիք», 04.01.2002թ.;
«Նոր Կյանք» 04.01.2001թ.;
«Բանբեր» N11, 2001; Փարիզ:
ԱՄՆ Ֆերլոնի «Լրաբեր» ամսագրում N11, 2001 թ.:

Վեմիր Համբարձումյան

Աստվածապաշտությունը ձախորդություններից խուսափելու և հաջողություններին հասնելու երաշխիքը

Հարգելի Հայրենակիցներ!

Ցանկանում եմ ձեր ուշադրությանը ներկայացնել մի հույժ կարևոր թեմա, որը հանդիսանում է՝ իմ գիտակցական կյանքի շուրջ 40 տարվա մտորումների ու պրպտումների եզրահանգումը: Այն թեկուզ իմ սուբյեկտիվ կարծիքն է, բայց անշուշտ ունի լուրջ և օբյեկտիվ գնահատման չափանիշներ: Այդ պատճառով ներկայացնելով այն ձեր ուշադրությանը, ես ակնկալում եմ ստանալ ձեր կարծիքներն ու դատողությունները, որպեսզի վերջնականապես կատարելագործեմ այն հոյակապ և անգնահատելի մեխանիզմը, որը բերված է որպես սույն հոդվածի վերնագիր:

Նախքան բուն թեմային անցնելը, ուզում եմ Ձեզ ներկայացնել այն սկզբնաղբյուրը, որը հիմք է հանդիսացել սույն ուսումնասիրություններին: Դեռևս ուսանողական տարիներին, ինքս ինձ հարց էի տալիս՝ ո՞րն է մարդկանց անհաջողությունների և դժբախտությունների պատճառը: Կա՞ն արդյոք որոշակի օրինաչափ ություններ, թե՞ դրանք կրում են զուտ պատահական բնույթ:

Այդ մտորումներն ինձ հանգեցրին նրան, որ Մոսկվայի Ավտոմեխանիկական ինստիտուտի ասպիրանտու րայում սովորելու (որտեղ ես գործուղվել էի Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի կողմից 1962 թվականի հունվարին) առաջին օրվանից մինչև օրս, իմ գիտակցական կյանքը նվիրեցի մի այնպիսի կարևոր գործի, ինչպիսին է

ավտովթարների և դժբախտ դեպքերի պատճառների պարզաբանումը, վթարները կանխարգելող միջոցառումների մշակումն ու ներդրումն առօրյա կյանքում:

Հայաստանի, Ռուսաստանի և Ալժիրի համալսարաններում և ինստիտուտներում, որտեղ աշխատել են երթևեկության անվտանգության և աշխատանքի անվտանգության և էկոլոգիական անվտանգության դոցենտի, պրոֆեսորի և ամբիոնի վարիչի պաշտոններում և եղել են տարբեր ֆոնդերի գիտա-հետազոտական և գիտա-արտադրական միավորումների ղեկավար, ունենալով ժամանակակից սարքավորումներ և շրջապատված լինելով բանիմաց և գործունյա աշակերտներով ու հետազոտողներով, մեզ հաջողվեց մշակել և իրագործել դեպքերի և ավտովթարների մի այնպիսի գիտա-գործնական մեթոդ, որը հնարավորություն է տալիս լուծելու անվտանգության պրոբլեմը ցանկացած բնագավառում և տարբեր բնակլիմայական պայմաններում:

Անվտանգության պրոբլեմի գործնական ապահովումը տրանսպորտում և արտադրությունում պահանջում էր կատարել «Մարդ-մեքենա-միջավայր» (ՄՄՄ) համակարգի տարրերի մանրագնի նուսումնա սիրություններ:

Մասնավորապես պարզվեց, որ վթարների կամ դժբախտ դեպքերի գերակշռող մասը (մոտավորապես՝ 80-85 տոկոսը) բաժին է ընկնում մարդկային գործոնին: Մարդկային գործոնի հետագա ուսումնասիրությունից պարզվեց, որ ըստ «Վթարայնության հակվածության աստիճանի» մարդկանց կարելի է դասակարգել երեք խմբերի՝ համեմատաբար անվտանգ անձնավորութ-յուններ՝ 25-35%, վտանգավորներ՝ 45-55% և բացարձակապես (կամ պոտենցիալ) վտանգավորներ՝ 13-15%, ովքեր հակված են փորձանքներ բերելուն: Ինչով է բացատրվում մարդկանց այս հակվածությունը դեպի վտանգավոր պահվածքն և անզույշ վերաբերմունքը թե սեփական և թե շրջապատի մարդկանց առողջության ու կյանքի նկատմամբ: Այս հարցերի պատասխանները գտնելու նպատակով բազմաթիվ դիտարկումներ և ուսումնասիրություններ ենք անցկացրել:

Ավտովթարների առաջացման մեխանիզմը կախված մարդկային գործոնից պարզաբանելու նպատակով, իմ կողմից մշակվեց ճանապարհային երթևեկության անվտանգության համակարգային վերլուծության **մեթոդը** (ՃԵԱԱՀՎՍ), որը ես պաշտպանել եմ որպես դոկտորական դիսերտացիա (1981թ), որը լայն ճանաչում ու կիրառում է ստացել տարբեր երկրների գիտական շրջանակներում, սակայն այդ հետաքրքիր թեման սույն հոդվածում չի քննարկվում, ըն թերցողների ուշադրությունը չչեղելու նպատակով:

Ավտովթարների կանխարգելման մեթոդի հիմքում ընկած է «համեմատության և հակադրման սկզբունքը»: Ըստ որի ՄՄՄ համակարգի մուտքի ազդանշանը (վարորդին տրված առաջադրանքը, մեքենաների և ճանապարհների գործող ստանդարտների ու նորմատիվային տվյալների պահանջները), համեմատելով համակարգի ելքի ազդանշանի (վարորդի ներկայիս վիճակի՝ առողջության, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական վիճակը, ճանապարհային պայմանների, մեքենայի տեխնիկական վիճակի) հետ մշակվում է անհամաչափության ազդանշան, որը մի կողմից ցույց է տալիս թե տվյալ ճանապարհային պայմաններում, կարո՞ղ է արդյոք տվյալ վարորդն իր փաստացի վիճակով կատարել ստանձնած առաջադրանքը, իսկ

մյուս կողմից, հետադարձ կապով ազդում է ՄՄՄ համակարգ վրա՝ նվազեցնելով համակարգին ներկայացնող պահանջները (բացասական կետադարձ կապ) միաժամանակ մեծացնում ՄՄՄ համակարգի հնարավորությունները (դրական հետադարձ կապի) միջոցով: Անվտանգության պրոբլեմը համարվում է լուծված, այսինքն ՄՄՄ համակարգը աշխատում է բացարձակապես անվթար, եթե համակարգում հաստատվում է դինամիկական հավասարակշռության, այսինքն՝ համակարգի փաստացի ելքը (կոպիտ ասած վարորդի վիճակն ու հնարավորությունները) համապատասխանում է համակարգի մուտքին տրված պահանջներին, այլ կերպ ասած՝ վարորդի ցանկություններին:

Մարդկանց ցանկությունների և հնարավորությունների պրոբլեմը ուսումնասիրելիս, պարզվեց, որ անվտանգության ապահովման և հատկապես երևակայության անվտանգության ապահովման գործում, խիստ կարևոր նշանակություն ունի մարդկանց (որպես տրանսպորտային պրոցեսի կառավարման համակարգի ամենակարևոր օղակի) էթիկական և բարոյական նորմերի ու կանոնների մշակումը, հատկապես ճանապարհային երթևեկությունը վերահսկող ոստիկանների համար:

Աշխատանքի բերումով, քանի որ միաժամանակ զբաղվում էի ճանապարհային երթևեկության անվտանգության, աշխատանքի անվտանգության և էկոլոգիական անվտանգության հարցերով, էթիկական և բարոյականության խնդիրների ուսումնասիրությունները, վերջին հաշվով, ինձ հանգեցրին այն համոզմունքին, որ նախկին սովետների երկրում գոյություն ունեցող կրթության համակարգը, պետք է ենթարկվի արմատական վերափոխությունների: Կրթության նախկին համակարգի բոլոր ուսումնական ծրագրերը հիմնված լինելով Մարքս-Լենինիզմի, Մատերիալիստական Դիալեկտիկայի և Կոմունիզմի անհրազործելի գաղափարների վրա, ամբողջովին ներծծված էին աթեիզմի ոգով: Հոգևոր հարցեր և բարոյականության կանոնների ուսուցումն ու դաստիարակումը՝ անտեսված էր: Իսկ էկոլոգիական անվտանգության ապահովումը՝ առաջին հերթին պահանջում է մարդկանց բարոյական կանոնների ուսուցումը:

Հիմնվելով այդ հարցի խորն ուսումնասիրման անհրաժեշտությանը, իմ առաջարկությունը նվիրված «էկոլոգիական կրթության արմատական վերափոխմանը», ընդունեց Ռուսաստանի բարձրագույն կրթության նախարարության կողմից, և ինձ, որպես գիտական թեմայի ղեկավարի, համապատասխան ֆոնդ և հետազոտական հնարավորություններ տրամադրեցին ուսումնասիրելու այդ հույժ կարևոր և ժամանակակից պրոբլեմը:

Ահա այս ուսումնասիրություններն էին, որ վերջին հաշվով ինձ բերեցին Աստվածաբանության և հատկապես Սուրբ Քրիստոսի կողմից մշակած և Նոր Կտակարանում շարադրած Քրիստոսի բարոյականության կանոնների գործնական կիրառմանը՝ դարձյալ օգտագործելով Անվտանգության պրոբլեմի համակարգային վերլուծության մեթոդը: Սակայն, այս պարագայում արդեն, որպես համակարգի մուտքի առաջադրանք՝ տրվում է Սուրբ Քրիստոսի բարոյականության կանոնները:

Բուն թեմայից չջեղվելու նպատակով ես չեմ ուզում քննարկել կատարված հետազոտման խիստ կարևոր արդյունքները, որոնք պատվիրատուի կողմից

արժանացան շատ բարձր գնահատանքի, որի արդյունքում ինձ շնորհվեց Ռուսատանի Գիտության Վաստակավոր Գործիչի կոչումը:

Այս բոլոր ուսումնասիրություններից հետո միայն ես համոզվեցի, որ Աստվածապաշտությունը, այն իրական և անխափան միջոցն ու մեխանիզմն է, որը մարդկանց կատարելագործման միջոցով կարող է հրաշքներ գործել մարդու անձնական կյանքում, կախված նրանից, թե տվյալ անձը ինչքանով խոր, սրտանց և առանց վայրկյան անգամ կասկածելու է վստահում իր հավատին՝ առ ամենաստեղծ ու հզոր Արարչի, որին մենք՝ հայերս, Աստված ենք կոչում:

Ավելին, կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները վկայում են, որ մեծամեծ հայտնագործություններ, արվեստի գլուխգործոցներ բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում, կատարել և ստեղծել են հանճարները՝ բացարձակապես աստվածային ներշնչանքով ու Աստծո օգնությամբ: Դա վերաբերում է Սուրբ Քրիստոսին, Հին և Նոր Կտակարանների հեղինակներին, Իսահակ Նյուտոնին, Ալբերտ Էյնշտեյնին, Միքելանջելոյին, Պազանինիին, Գալիլեո Գալիլեին, Ջորդանո Բրունոյին, Ռաֆայելին, Ալեքսանդր Դյումային, Լուի Պաստորին, Բեթհովենին, Գյոթեին, Ջորջ Վաշինգտոնին, Աբրահամ Լինկոլնին, Ռուզվելտին, Նորբերտ Վիներին, Ֆոն Նեյմանին, Վան Գոգին, Պաբլո Պիկասոյին, Լև Տոլստոյին, Ֆեոդոր Դոստոևսկուն, Իվան Պավլովին, Մեսրոպ Մաշտոցին, Գրիգոր Լուսավորչին, Անանիա Շիրակացուն, Գրիգոր Նարեկացուն, Վիկտոր Համբարձումյանին, Մարտիրոս Սարյանին, Արամ Խաչատրյանին, Հովհաննես Թումանյանին, Չարենցին, Կոմիտասին, Սայաթ-Նովային, Հովհաննես Այվազովսկուն, Շառլ Ազնավուրին, Պարույր Սևակին և այլն:

Որպեսզի վերը նշված իմ խորին համոզումները չվերածվի լոկ դատարկախոսության, ես ցանկանում եմ բացատրել այդ գլխավոր և շատ անհրաժեշտ հարցի վերաբերյալ իմ տեսակետը, նախօրոք ներեղություն խնդրելով աշխարհահռչակ աստվածաբաններից իմ պարզ և հասարակ դատողությունների համար, նպատակ ունենալով այդ բարդ և միևնույն ժամանակ հույժ կարևոր պրոբլեմը մատչելի դարձնել զանգվածային ընթերցողին:

Բոլորիս հայտնի է, որ ի սկզբանե Մեծն Արարիչը ստեղծել է երկինքը և երկիրը, որից հետո ստեղծել է մարդկային գոյը՝ բաղկացած երկու հիմնական բաղադրյալներից՝ մարմնից և հոգուց, այլ կերպ ասած մարդկային գոյը բաղկացած է նյութական և հոգեկան բաղադրիչներից:

Հետագայում դարերի ընթացքում, այդ «մարդ» կոչվող գոյը, անցնում է զարգացման հինգ փուլերը (ըստ Ելենա Բլավադսկայայի տեսության) և մենք ներկայումս գտնվում ենք մարդկային էակի (գոյի) զարգացման հինգերորդ փուլում: Մեր այս ներկա փուլում, որը սկիզբ է առել հազարամյակներ առաջ, մարդը որպես կատարելագործված էակ ունի իր նյութական աշխարհը (մարմինը, գլուխը, ձեռքերը, ոտքերը...) և հոգեկան աշխարհը (միտքը, դատողությունը, ապրումները, զգացողությունը, երևակայությունը, հիշողությունը...)

Թեպետ մեծն Արարիչը ի սկզբանե մարդուն ստեղծել է որպես մաքուր, աստվածային էակ, ծնվելուց հետո, միջավայրի բազմաթիվ գործոնների ազդեցության հետևանքով նրա մեջ սկսել է սաղմնավորվել չարի, վատի, ատելության, նախանձի, կեղծիքի և այլ

բացասական հատկանիշներ՝ կամաց-կամաց նրա էությունից դուրս մղելով բարու, լավի, սիրո, ազնվության և շատ ուրիշ աստվածային հատկանիշներ:

Իմիջիայլոց, ըստ որոշ աստվածաբանների, երեխան ի ծնե արդեն ունի չարի որոշ հակվածություն: Ի տարբերություն նրանց, Ֆրանսիայի XVIII դարի լուսավորիչները համարում էին, որ նորածին երեխան նման է մաքուր գրատախտակի, որի վրա կարող ես գրել այն, ինչ ցանկանում ես:

Պարզ է և հասկանալի, որ բոլորս էլ ունենք ինչպես դրական, այնպես էլ բացասական հատկանիշներ, մեկի մոտ՝ շատ մյուսի մոտ՝ քիչ: Եթե անցկացնենք զուգահեռներ, ապա ինչպես որ մարդ էակը բաղկացած է նյութական և հոգևոր բաղադրիչներից, այնպես էլ՝ նա օժտված է դրական և բացասական հատկություններով:

Բոլորս էլ ապրում ենք իրական աշխարհում և բոլորս էլ ենթարկվում ենք ինչպես մակրոկլիմայի՝ արտաքին միջավայրի, բնակլիմայական պայմանների (ձյուն, անձրև, քամի...) ազդեցությանը, այնպես էլ միկրոկլիմայի՝ մարդկանց, շրջապատող միջավայրի (ընտանիք, աշխատանք, երթևեկություն և առողջական վիճակ...) ազդեցություններին:

Կախված օրգանիզմի ֆիզիկական վիճակից, ֆիզիոլոգիական և հոգեբանական հատկություններից, մարդիկ տարբեր ձևով են ընկալում, դիմակայում, ենթարկվում և արձագանքում այդ բազմաթիվ և բազմա-տեսակ ազդեցություններին: Մեր սկզբունքային հարցա-դրումը հենց կայանում է նրանում, թե ո՞վ և ի՞նչ չափով է կարողանում ընկալել և դիմակայել այդ ազդեցություն-ներին, որպեսզի խուսափի ձախորդություններից, ասել է թե՛ որպեսզի ունենա հաջողություններ, քանի որ այդ երկուսը հակադարձ համեմատական են:

Հին և Նոր Կտակարաններում և աստվածաբանական գրականության մեջ բերված են բազմաթիվ տվյալներ, որոնք վկայում են, որ հոգեպես ուժեղներն անհաղթ են: Համոզված են, որ այս գրքի ընթերցողներից շատերը, ոչ միայն քաջատեղյակ են Կտակարանի դրույթներին, այլև դրանք իրագործում են իրենց առօրյա կյանքում: Բայց և այնպես, ավելորդ չեն համարում մեջբերել Հիսուս Քրիստոսի հետևյալ խոսքերը՝ «Հօգին է կենդանարարը, մարմինը ոչ մի բան չի կարող անել» (Ա. Հովհ. 6.64): «Եթե մանանեխի հատիկի չափի հավատք ունենանք, ապա սարին կասենք այստեղից տեղափոխվիր այնտեղ և կտեղափոխվի» (Մատթ. 17.20):

Ինչպես հայտնի է, Գրիգոր Լուսավորիչը 14 տարի ապրել էր խոր Վիրապում, միանգամայն անմարդկային այնպիսի պայմաններում, որտեղ սովորական մահկանացուն չէր կարող ապրել թեկուզ մի քանի օր կամ շաբաթ: Երբ, վերջապես, ճանաչեցին Նրա մեծությունը և եկան դուրս հանելու խոր Վիրապից, և երբ պահակը՝ Ատոմը, «որը ինքը ևս համոզված լինելով Գրիգորիոսի վաղուց մեռած լինելուն, ձայնեց.

- Սուրեն - Գրիգորիոս, ո՞ղջ ես:

Ի զարմանս՝ Ատոմը լսեց իր հարցումին դրական պատասխանի արձագանքը.

- Այո՛, կամքի շնորհիվ Ամենակալին Աստծուն ...»)

Դեռ մանկությունից, ես հիշում եմ մեծ հոգևորականի թոռ հայրիկիս պատմած հետևյալ պատմությունը: Տիրակալին չհաճոյանալու պատճառով, մի հայտնի բժշկի բանտ են նետում և տեղավորում են միայնակ խցում, ձեռքերին և ոտքերին շղթաներ հագցնելով:

Օրապահիկը՝ մի կտոր չոր հաց և մի բաժակ ջուր: Բայց, քանի որ բժիշկն օժտված էր արտակարգ խելքով և խոր հմարամտությամբ, տիրակալը պարտավորեցնում է բանտապետին ուշադիր հետևել կալանավորին և նրա յուրաքանչյուր արարքի մասին իրեն տեղյակ պահել: Ապարդյուն, երկար սպասելուց հետո, տիրակալը բանտախուց է ուղարկում իր համհարզին եղելությունը պարզելու նպատակով:

Հանդիպելով բանտարկյալին, համհարզը ապշում է՝ իր առաջ տեսնելով մի առողջ և կենսուրախ մարդու: Երբ համհարզը սկսում է հարցաքննությունը, զարմանալով լսում է խոր իմաստությամբ լեցուն խոսքեր: Չզսպելով իր հիացմունքը, պատվիրակը հարց է տալիս՝ «Ինչպե՞ս եք կարողացել պահպանել ձեր ինքնատիրապետումը այսպիսի անմարդկային պայմաններում»:

Բանտարկյալը պատասխանում է՝ «Մի՞թե դուք չգիտեք, որ ես բժիշկ եմ: Եթե ինձ հաջողվել է բուժել ուրիշներին, ապա ինքս ինձ առավել ևս կարող եմ բուժել: Ես հնարել եմ մի դեղ բաղկացած 5 մասերից և ամեն օր ընդունում եմ այդ հրաշալիքից մի փոքրիկ մասնիկ: Այսպիսով ես պաշտպանել եմ իմ առողջությունն ու հոգուս ներկայությունը: Համհարզը խնդրում է բացել այդ հրաշալիքի գաղտնիքը, որին բժիշկը պատասխանում է. «Առաջին բաղկացուցիչ մասը, դա հավատքն է Աստծու նկատմամբ: Երկրորդը՝ այն հասկացողությունը, որ իմ դժբախտությունների պատճառը իմ մեղքերն են: Երրորդ մասը՝ գիտակցումն այն բանի, որ Աստված ինձ պատժում է ինձ օգնելու նպատակով: Չորրորդը՝ իմ համոզվածությունն է, որ ինձանից էլ ավելի մեծ դժբախտություններ ունեցողներ կան: Հինգերորդը՝ ես հաստատ համոզված եմ՝ իմ Տեր Աստվածն ինձ անպայման օգնության կհասնի»:

Այսպիսով Գերագույն Արարիչը, ստեղծելով մարդուն և կանխատեսելով նրան սպառնացող անընդհատ աճող բացասական գործոնների ազդեցությունը, նրան զինել է մի հզոր և անպարտ զենքով՝ հոգով: Նա բոլորիս մարմնի մեջ տեղադրել է այդ երկնային գործիքը և մենք պարտավոր ենք իմանալ ոչ միայն, թե ինչպես պահպանենք մեր հոգու մաքրությունը, որպես Աստծու Գերագույն Պարգևը, այլև թե ինչպես և ինչ ձևով հզորացնենք մեր հոգու ուժը, որպեսզի դիմակայենք առաջացող դժվարություններին և վերջին հաշվով դառնանք կատարյալ Մարդ՝ մեծատառով:

Այստեղ մեզ դարձյալ օգնության է գալիս մեզ ստեղծող Արարիչը, այն իմաստով, որ աշխարհի ամենախոշոր հանճարները ստանալով նրանից առաջադրանք, մեզ բոլորիս համար գրել ու պատրաստել են երկու հոյակապ դասագրքեր՝ Հին և Նոր Կտակարանները, որտեղ ամենայն մանրամասնությամբ, բազմաթիվ օրինակներով և գեղարվեստական անգերազանցելի ոճով շարադրել են մեր անելիքները՝ մեր հոգու մաքրությունը պահպանելու և հոգևոր ուժը զորացնելու համար:

Հարց է առաջանում, թե մեր ամենօրյա հոգսերով ծանրաբեռնված կյանքում ինչպե՞ս զորացնել մեր հոգու ուժը, ինչպե՞ս դառնալ հոգեպես հզոր, որը մարդու անվտանգության, բարեկեցության և երջանկության նախապայմանն է:

Ինչպես որ մեր մարմնի նյութական բաղադրիչն է կարիք զգում ամենօրյա սննդի, այնպես էլ մեր հոգևոր բաղկացուցիչը կարիք է զգում ամենօրյա, դեռ ավելին, կարելի է ասել՝ ամենժամյա սննդի: Ինչպես որ նյութական սնունդը պետք է լինի որակով և առանց լրացուցիչ նուրբախտների, այնպես էլ հոգևոր սնունդը պետք է լինի որակով, այսինքն՝ մաքուր, բյուրեղյա և անկեղծ:

Եթե նյութական սնունդը ստանում ենք Մայր հողից և երկրի ընդերքի հարստություններից, ճիշտ այդպես էլ մեր հոգևոր սնունդը ստանում ենք երկնքից, տիեզերքից, Մեծ Արարչից, մեր Աստծուց:

Բանն այն է, սակայն, որ հոգևոր սննդի ստացման որակն ու քանակը կախված է միմիայն մեզանից, թե ինչքանով ենք մենք անկեղծ, անկողմնակալ, անմիջական ու խոր հավատով դիմում Արարչին՝ աղոթքի կամ մեղիտացիայի միջոցով և նրանից ստանում ու մեր մեջ, մեր հոգու խորքում ներդնում այն անսպառ հոգեկան ուժն ու սնունդը, որին մեզանից յուրաքանչյուրն արժանի է, ըստ իր՝ Աստծուն նվիրվածությանը:

Նա ով իսկապես և անկեղծորեն հավատում է Աստծու զորությանը, նա հոգևոր ուժի միջոցով սերտ, անխազելի և հզոր կապ է ստեղծում երկրի և երկնքի միջև՝ իր մարմնական և հոգևոր գոյը դարձնելով այդ շղթայի բազմահազար հուսալի օղակներից մեկը: Եվ հակառակը՝ անհավատների մեջ այդ կապը խզված է և նա ապրում է որպես սովորական մի մահկանացու արարած, իր ամենօրյա հոգսերով, անլուծելի խնդիրներով ու դժվարություններով, որը վերջին հաշվով կարող է բերել անհաջողությունների և դժբախտությունների:

Սեպտեմբերի 11-ի դեպքերը Նյու Յորքում ապացուցում են, որ կա նաև չարի եւ ատելության ներշնչանք, որը գոյանում է ոճրագործների մեջ կախված ոչ թե ներշնչվողի, ինչպես նշվեց վերևում, այլ ներշնչողի ուժից ու զորությունից: Իսլամական ֆունդամենտալիստները կատարեցին այդ սարսափելի և աննկարագրելի ոճրագործությունը (և ես խորապես համոզված եմ, որ դարձյալ կկատարեն նման չարագործություններ, եթե դրանց իսպառ չբնաջնջել), քանի որ նրանց ուսմունքի ու դաստիարակության հիմնաքարն այն է, որ իրենք կանմահանան՝ եթե կարողանան սպանել «գյավուրիներ», ասել է թե՛ բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում իսլամի այդ հիմնական՝ ֆունդամենտալ (այստեղից է գալիս դրանց անվանումը, որպես իսլամական ֆունդամենտալիստներ) տեսությունը, դրույթը, պատվիրանը:

Տարիներ շարունակ, դեռևս փոքր հասակից, դաստիարակվելով այդ ուսմունքով և երեխաներին ներշնչելով այդ կեղծ անմահության գաղափարը, նրանք անհամբեր, իսկ երբեմն տարիներ շարունակ (ինչպես սեպտեմբերի 11-ին) սպասում են նպաստավոր պահի՝ իրականացնելու իրենց անմահանալու երազանքը, վայրկյան անգամ չմտածելով, որ կատարում են հանցավոր ոճրագործություն՝ սպանելով մեծ Արարչի ստեղծած էակին՝ մարդուն:

Անդրադառնալով մեր թեմային, ես ուզում եմ ընդգծել հետևյալը: Օգտագործելով ճշգրիտ գիտությունների՝ հավանականությունների տեսության, Ռիսկի տեսության, հուսալիության տեսության և տրամաբանության հանրամատ-չելի սկզբունքները, մի կողմից մշակվել է մի պարզ և հասկանալի մեթոդ՝ անհատի ինքնակատարելագործման համակարգի հաշվարկի մեթոդը, որը հնարավորություն է տալիս ցանկացած մարդու վերլուծելու իր բարոյական, բարեկեցության և առողջական (մարմնական և հոգևոր) վիճակների համեմատական գնահատականները:

Մշակված մեթոդի հիմնական էությունը հետևյալն է: Եթե կազմենք բարու ու չարի հետևյալ հակասությունների զուգորդությունները՝ աստվածապաշտություն - աթեիզմ, սեր-ատելություն, բարություն-չարություն, ազնվություն-անազնվություն, լավություն-

վատություն, իմաստություն-տգիտություն, կամեցողություն-նախանձ, բարոյականություն-անբարոյականություն, ճշտապահություն-կեղծիք և մարդու էությունը բնութագրող այլ ցուցանիշներ, ապա յուրաքանչյուր պարամետրին տալով այն իրական արժեքը հավանականության 0-ից 1-ի սահմաններում, այն հաշվով, որ հակադրության պարամետրերի գումարային արժեքը չգերազանցի 10-ը, ապա յուրաքանչյուր մարդ, գնահատելով իր անձնական հատկանիշներն անցյալում, ներկայում ու ապագայում և օգտվելով իմ արտահայտած բանաձևերից և տրամաբանական ձևափոխումների միջոցով ստացած հավասարումներից, կարող է որոշակի հավանականությամբ գնահատել իր վիճակը, վերը նշված երեք հիմնական ցուցանիշներով՝ անցյալում, ներկայում և ապագայում: Ավելին, ոչ բարդ հաշվարկների միջոցով նա կարող է որոշել, թե ինչպիսի հատկանիշների փոփոխմամբ կարող է կատարելագործել իր հոգեկան աշխարհը և նյութական բարեկեցությունը:

Եվ վերջում ուզում եմ մեկնաբանել այն, թե ինչու եմ բերել Մեսրոպ Մաշտոցի խոսքերը, որպես իմ մտորումների նշանաբան:

Մեր մոլորակի բոլոր չարիքների հիմքը կազմում են տգիտությունը, հետամնացությունն ու իմաստության բացակայությունը: Եվ երբ մեր Մեծ սրբազան Հայրը՝ Մեսրոպ Մաշտոցը, դեռևս հազարամյակներ առաջ մեզ պատվիրեց ճանաչել իմաստություն, խրատ և հանճարների գործը, ապա նա իմաստության հասկացողության տակ նկատի ուներ հենց Աստվածաբանությունը, որովհետև իսկական իմաստունն այն մարդն է, ով ճանաչում է Մեծն՝ Աստծուն:

Մաշտոցի խրատը մարդկանց ուղեցույց հանդիսացող այն խորհուրդներն են, որոնք շարադրված են Հին և Նոր Կտակարաններում: Մաշտոցի խրատը Աստվածապաշտությունն է: Եվ վերջապես, «հանճարների գործը» ասելով Մ. Մաշտոցը մեզ պատվիրում է ճանաչել, հասկանալ և առօրյա կյանքում իրագործել այն խորհուրդները, որոնք շարադրված են հանճարների կողմից Հին և Նոր Կտակարաններում:

Մաշտոցի սրբազան խոսքերը ունեն համամարդկային և մեզ՝ հայերիս համար ազգային խիստ կարևոր նշանակություն: Համամարդկային նշանակությունն այն է, որ եթե մարդկային հասարակությունը և հատկապես պետական և քաղաքական գործիչները, գիտնականներն ու բիզնեսմենները հետևեն աստվածաբանության օրենքներին ու դրույթներին, ապա այդպես բարբարոս աբար չէին շահագործի երկրագնդի ընդերքը և անողոքաբար աղտոտի միջավայրը, որի պատճառով մարդկությունն այսօր կանգնած է Էկոլոգիական անլուծելի խնդիրների (աղետի, ճգնաժամի) առջև: Ի միջիայլոց, ըստ ժամանակակից ամենախոշոր գիտնական, Նոբելյան մրցանակի դափնեկիր Սթիվեն Հոքինգի կանխատեսումների, երկրագնդի բնակչությանը վիճակված չէ գոյատևել մինչև 3000 թվականը: Մեր կողմից ավելացնենք՝ եթե մարդկությունը չհրաժարվի իր դժբախտությունների պատճառը հանդիսացող՝ ներկայիս փողամոլուցքի մրցավազքից և չզբաղվի աստվածապաշտության վրա հիմնված քրիստոնեության բարոյական նորմերի և կանոնների դաստիարակությամբ, որպես մարդկային ցեղի փրկության միակ միջոց, ապա այդ կանխատեսումը կարող է և իրականություն դառնալ:

Մ. Մաշտոցի պատվիրանների համահայկական նշանակությունն այն է, որ, այս օրհասական պահին, ինչպես և 1700 տարի առաջ, մեր ժողովրդի փրկության ամենակարևոր միջոցը Աստվածապաշտությունն է:

Նախ յուրաքանչյուրիս այն անհրաժեշտ է մեր հոգու մաքրության համար, որպեսզի մեր միջից հանենք նախանձը, փառասիրությունը, եսասիրությունը, գոռոզամտությունը, անհամեստությունը և այլ բացասական հատկանիշներ, որպեսզի հոգով մաքրվենք և այդ մաքրությունը հնարավորություն ընձեռի մեր հոգևոր ուժի հզորացմանը:

Հոգևոր ուժի հզորացումն արդեն դիտվում է ոչ միայն անհատի մակարդակով, որն անշուշտ այսօր խիստ կարևոր է, այլ պետականության գոյատևման և համազգային ազգափրկիչ նշանակությամբ: Որովհետև Աստվածաբանությունն ու Աստվածապաշտությունն է Մայր Հայրենիքին և Սփյուռքին կապող և միաձուլող այն զորությունը, որի հիմքի վրա պետք է կառուցվի մեր միասնության Աշտարակը, որի փարոսը լույս և ուժ պետք է սփռի ամբողջ աշխարհի հայությանը և որի զորությունը պետք է համախմբի ու կազմակերպի ամբողջ աշխարհով մեկ սփռված մեր տաղանդավոր ժողովրդին՝ այսօրվա օրհասական վիճակից դուրս բերելու և գալիք ցեղասպանությունից փրկելու համար:

Հրատարակվել է Ֆրանսիայի «Բանբեր» ամսագրում 2002թ. N 11, էջ 17-22, ԱՄՆ-ի «Նոր Կյանք» շաբաթաթերթի փետրվարի 21, 2002թ., և փետրվարի 28, 2002թ. համարներում: